բոլոր քաղաքները։ Ապա Հաբիբ ուղարկեց նորան Շիրակ, Տայք եւ Բագրեւանդ. այս երկրների պատրիկը եկաւ նորա մօտ, եւ Հաբիբ խաղաղութիւն կապեց նորա հետ այն պայմանով, որ բնակիչք նորան հարկ վճարեն, մուսլիմների հետ բարեկամաբար վարւեն, հիւրընկալեն եւ օգնեն իրանց թշնամիների դէմ։ Ահաւասիկ Դուինի բնակիչներին գրած խաղաղութեան թուղթը՝

"Յանուն Աստուծոյ ամենաբարւոյ եւ գթասերի. այս է Հաբիբ ի Մասլամայի թուղթը առ Դուինի քրիստոնեայ, կրակապաշտ եւ հրէայ բնակիչները, որոնք ներկայ են կամ բացակայ, թէ ես երաշխաւորում եմ ձեր կեանքը, գոյքը, եկեղեցիները, առեւտուրն, քաղաքի պարիսպը, եղէք ապահով. մենք պարտաւոր ենք մեր պարտքը ձեր վերաբերմամբ կատարել, մինչեւ որ դուք ձերը մեր վերաբերմամբ կատարէք եւ վճարէք գլխահարկ եւ տուրք՝ ականատես է Աստուած եւ նա բաւական է իբրեւ ականատես. (թուղթս) կնիքով հաստատեց Հաբիբ ի Մասլամայ։"

Հաբիբ ապա եկաւ Նախիջեւան եւ նուաճեց քաղաքը նոյն խաղաղութեան պայմանով, ինչպէս եւ Դուին։ Նորա մօտ շտապեց Վասպուրականի իշխանը[1] եւ խաղաղութիւն կապեց նորա հետ այն պայմանով, որ իւր ամբողջ երկրից եւ Հայ... եւ Ափարիստայ (?)[2] (գաւառներից) նորան տարեկան հարկ վճարէ։

Այնտեղից Հաբիբ եկաւ Սիսական, պատերազմեցաւ բնակիչների հետ, յաղթեց նոցա եւ տիրեց Վայոց (Ձորին)։ Հաշտութիւն շնորհելով

---

1 Արաբացի մատենագրեր "պատրիկ" բառը սովորաբար կը գործածեն նոյն իմաստով, որով մեր մատենագրեր "տէր" կամ "իշխան" բառերը։

2 Անուններիս ընթերցումը միանգամայն աղուաղած է։